

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 3 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աննայի վերնամասերէն մէջ: Ժամարարն էր Ս. Էմմանուէլ Արդ. Աբաշանեան:

Կիր. 4 Հոկտ.- Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամասերէն մէջ: Հանդիսացան էր Ս. Սեւան Եպս. Դարիպեան: Ժամարարն էր Ս. Թեոդորոս Արդ. Զաքարեան: «Հայր Մեր»էն առաջ Բարոզեց Ս. Էմմանուէլ Արդ. Աբաշանեան:

Ուր. 9 Հոկտ.- Նախատեսակը պաշտուեցաւ Դպտոց Ս. Գեորգ Վանքի եկեղեցւոյ մէջ: Հանդիսացան էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 10 Հոկտ.- Ս. Գեորգայ գորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Դպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Ս. Անուշահան Ծ. Վրդ. Զոհանեան: Երբ ու դարձի թափօրները գլխաւորեց Ս. Արիս Եպս. Շիրվանեան, որ «Հայր Մեր»էն առաջ Բարոզեց: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Դպտոց Վանքի տեսչէն:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատեսակը մեր վերնամասերէն մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տանաւն ինքս: Թափօրապետն էր Կոմիտաս Վրդ. Շերպէրեան:

Կիր. 11 Հոկտ.- Տօն Վարագայ Ս. Խաչին (660): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերէն մէջ: Հանդիսացան էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան որ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ Բարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Շր. 17 Հոկտ.- 72 Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին զարին մէջ գտնուող Ս. Գեորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 18 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Ռամէլէի Ս. Գեորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Երուսաղէմի, Եաֆայի եւ Հայֆայի հայութեան կարեւոր մէկ մասին: Հանդիսացան եւ Բարոզիչն էր Ս. Գուսան Վրդ. Այնանեան:

Ուր. 23 Հոկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 24 Հոկտ.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: (Տօն Ազգային եւ եկեղեցական) Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ Բարոզեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Ս. Թեոդորոս Արդ. Զաքարեան:

Յարարտ Ս. Պատարագի կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծանուն քարերարներ Գալուստի, Նուարդի Սարգիսի եւ Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներուն, եւ հայ մեծանուն կոմպոզիտորներու հոգիին ի հանգիստ. նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 25 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

«Հայր Մեր»էն առաջ Բարոզեց Ս. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Շր. 31 Հոկտ.- Ս. Զորից Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի զարին վրայ բացուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսացան էր Ս. Շնորհ Ծ. Վրդ. Գասպարեան: Ժամարարն էր Ս. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Կիր. 1 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերէն մէջ: Հանդիսացան էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Ս. Շնորհ Ծ. Վրդ. Գասպարեան: «Հայր Մեր»էն առաջ Բարոզեց Ս. Բեմանուէլ Արդ. Բաբայանեան:

Իշ. 2 Նոյ.- Ս. Յովսէփայ Աստուածածին: Ըստ սովորութեան, Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչ՝ Ս. Հայրիկ Վրդ. Գալպեհան պատարագեց նոյն Տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսացան էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 7 Նոյ.- Ս. Երկրտաւան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիւր: Ժամարարն էր Ս. Համբարձում Վրդ. Քելշիեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիւտի այրի ուխտերն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատեսակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Ս. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան:

Կիր. 8 Նոյ.– Գիւտ Ս. Խաչի (326): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Այնտեղ մատուցուեցաւ Ս. Պատարագը: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Պարտեւ Մ. Վրդ. Երեցեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս քափօր, իջնելով նախ Գիւտ Խաչի այրը եւ քարճրանալով Ս. Գերեզմանին շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջ, եւ մէկ անգամ Պատանատեղոյն: Քափօրը կը գլխաւորէր Պատրիարք Սրբազան Հայրը, ամպիռվանի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռնին: «Խաչի Քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Շր. 14 Նոյ.– Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիք: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աբաջանեան:

Կիր. 15 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վիգէն Եպս. Այգազեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Էջմիածնի Գեորգեան ձեմարանի Տեսուչ Տ. Հայկազուն Մ. Վրդ. Նանարեան, որ ուխտաւորաբար Երուսաղէմ ժամանած էր Նոյ. 10ին, երեսնէն Գեր. Տ. Վիգէն Եպս. Այգազեանին հետ:

Ուր. 20 Նոյ.– Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 21 Նոյ.– Ս. Հրեշտակապետաց Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան:

Ըստ սովորութեան, կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Արողոյ՝ Բարեբարուհի Աղաւնի ձեւախորհեանի եւ պարագայից հոգիներուն համար: հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Կիր. 22 Նոյ.– Դարձեալ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Շնորհիմ Մ. Վրդ. Գասպարեան: «Նա Առաւել»էն առաջ Գեր. Տ. Արիս Եպս. Շիրվանեանի քարոզէն, եւ Կ. Պոլսոյ նորընտիր Պատրիարքին այսօր տեղի ունեցող գահակալութիւնը ծանուցանելէն յետոյ, առաջին անգամ յիշատակեց Կ. Պոլսոյ Պատրիարք Գեր. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի անունը: Հոգեհանգիստ կատարուեցաւ Երուսաղէմացի Հայոց Բարեսիրական Միութեան

անդամներուն հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 28 Նոյ.– Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիք: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կիր. 29 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաֆարեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Նշ. 8 Հոկտ.– Երուսաղէմի Պապական Առաքելութեան Գրասենեակին հրաւերին ընդառաջելով՝ Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի, Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի, եւ Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեանի ներկայ գտնուեցաւ ընդունելութեան մը Նօթրը Տաճի մէջ, ի պատիւ դադարեալ Տնօրէն՝ Մօսսիկեօր Ռոպերթ Բիտիի հրաժեշտի, եւ միաժամանակ Նոր Տնօրէն՝ Հայր Կիտօ Կօֆէլի քարեգալտեան:

Ուր. 9 Հոկտ.– Տ. Դաւիթ Արք. Սահակեան, որ Լիոնէն Երուսաղէմ եկած էր իր եղբոր բոռան մկրտութեան առիթով, տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Բշ. 12 Հոկտ.– Սպանիոյ Երուսաղէմի Ընդհանուր Հիւպատոս Մանուէլ Սալազարի հրաւերին ընդառաջելով Պատրիարք Սրբազան Հայրը, իր հետը ունենալով, Տ. Արիս Եպս. Շիրվանեանը, Տ. Սեւակ Եպս. Դարիպեանը, եւ Տ. Անտիս Վրդ. Խլրաբեանը ներկայ գտնուեցաւ Սպանիոյ Ազգային Տօնին տարեդարձին առիթի կազմակերպուած ընդունելութեան Հիւպատոսարանին մէջ:

Ուր. 12 Հոկտ.– Պարպարա Անն Մարթին սօփրանօ երգիչ հայուհին, Շիֆակոյէն, անուանի ղեկավար Զուպին Մէքրայի եւ նուագախումբին հետ Իսրայէլ հրաւիրուած էր Հոկտեմբեր 7-13 օրերուն, երգելու համար արդի երաժիշտներէն ձօրն Քրիմի հեղինակած «Հին Զայներ Մանուկներուն» ստեղծագործութիւնը, ուր մարդկային հոգեվիճակներ խորհրդապաշտ եւ պոթեկացող ու միմեջող ձայնարկութիւններով կը պատկերուին:

Իր համերգներէն յետոյ, Պարպարա Մարթին, 11 եւ 12 Հոկտեմբերին հիւրը եղաւ Պատրիարքարանիս, այցելելով սրբավայրերը, Վարագայ Խաչի տօնի Կիրակին Քրիստոսի Գերեզմանին վրայ մատուցուած Պատարագին Ս.

Հաղորդությունն ստանալով, եւ Երկուշաբթի գիշեր, ժառանգաւորաց Վարժարանի արահին մէջ բացատրելով եւ ներկայացնելով մասեր նոյն ձայնարկութիւններէն եւ բառերէն, որոնց վերջին տողը մարդուն խնդրանքն է Տիրոջմէն՝ «Ես ինձի տալու իմ հոգին մանուկի»:

Ուր. 16 Հոկտ.– Անկլիկան եկեղեցւոյ հոգեւորականներ՝ Կիպրոսի եւ Կրլֆի եպիսկոպոս Գլայվ Հէնտֆօրտ, Լոնտոնի եպիսկոպոս Ռիչըրտ Չալքըրըզ եւ իր օգնականը Հայր Տէյվիտ Մէլիքեան եւ Երուսաղէմի Անկլիկան եկեղեցւոյ Առաջնորդ Ռիսի Ապու–Էլ–Ասալ այցելեցին Պատրիարքարան եւ տեսակցութիւն ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Կիր. 25 Հոկտ.– Լուտերական եկեղեցւոյ Երուսաղէմի մէջ ներկայութեան 100 ամեակին առիթով կազմակերպուած յայտագիրներէն երգեհոնի ղառական երաժշտական նուագահանդէսին ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի: Շարքաւորանք ընթացքին տեղի ունեցած արարողութեանց մասնակցեցան Արիս Եպս. Շիրվանեան, Գրուսան Վրդ. Ալեանեան:

Գշ. 27 Հոկտ.– Պատրիարք Սրբազան Հօր գահակալութեան Ուրբեորդ տարեդարձին առիթով Պատրիարքարանի մէջ իրենց շնորհաւորանքը յայտնեցին ժառանգաւորաց եւ Թարգմանչաց Վարժարաններու ուսուցչական կազմը եւ աշակերտութիւնը, եւ ղիւսնատան եւ գանազան գրասենեակներու պաշտօնէութիւնը: Ընթրիքին Միաբանական Սեղանատան մէջ Պատրիարք Սրբազան Հայրը սեղանակից եղաւ Միաբանութեան, ընդունեց Միաբան եղբայրներուն բարի մաղթանքները եւ Հայկական Յախճապակիէ պնակի նուէրը, եւ մաղիքն որ իւրաքանչիւր միաբան, աստուածատու իր շնորհը զարգացնելով հաւատարմօրէն ծառայէ նուիրական մեր այս հաստատութեան:

Ընթրիքէն յետոյ, Պատրիարք Սրբազան Հայրը մասնակցեցաւ Պապական Նուիրակին հրաւերով տրուած ընդունելութեան, Յովհաննէս Պօղոս Բ. Սրբազան Պապին գահակալութեան 20րդ տարեդարձին առիթ, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի, Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի, Տ. Աւետիս Արդ. Իփրանեանի:

Եշ.– Կիր. 29 Հոկտ.– 1 Նոյ.– Հայաստանի Արտաքին Գործոց Նախարար Տիար Վարդան Ոսկանեան Իսրայէլ կ'այցելէ: Համաձայն Պատրիարքարանի կողմէ կատարուած կարգադրութեանց, Տիար Վարդան Ոսկանեան, իր ընկերակիցներով, Եգիպտոսի մէջ Հայ Հիւպատոս

Տիար Եղուարդ Նալպանտեանի, Երուսաղէմի մէջ Պատուոյ Հիւպատոս Տիար Յովակ Մոմենեանի, Երեւանէն Արման Յակոբեանի, Աշոտ Գրիգորեանի, Եւրի Բարախանեանի, այցելեց Ս. Յարութեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարները, եւ վանքէն ներս հաստատութիւնները: Շարքաւոր երեկոյ, 31 Հոկտեմբերին, Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան անդամներուն հետ ընթրիքէն յետոյ, Տիար Վարդան Ոսկանեան հրապարակային դասախօսութեամբ մը անդրադարձաւ ներկայ Հայաստանի բաղաժանան, տնտեսական եւ քաղաքական կացութեանց եւ հարցերուն:

Բշ.– Ուր.– 9-13 Նոյ.– Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ռիսի Միաբանական Ընդհանուր Ժողովի նիստերը գումարուեցան Պատրիարքարանի ղախիւնին մէջ, Միաբանութեան 43 Բուժարկող անդամներէն 33ի մասնակցութեամբ: (Մանրամասնութիւններ տեսնել «Հաղորդագրութիւն» գլուխին ներքեւ):

Եր. 21 Նոյ.– Կ. Պոլսոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցան Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուած Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի Գահակալութեան արարողութիւնը եւ հանդիսութիւնները: (Մանրամասնութիւնները ՍԻՈՆի յաջորդ թիւին մէջ պիտի տրուին):

Եր. 28 Նոյ.– Երովպիական եկեղեցւոյ կողմէ Երուսաղէմի համար նշանակուած նոր Արքեպիսկոպոս Ապունա Վապրիկ ժամանեց եւ Քրիստոսի Գերեզմանին իր այցելութիւնը կարգադրուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր Տեսչին, Տ. Վաղարշ Եպս. Խաչատրեանի կողմէ, եւ մեր Տեսչարանին մէջ պատշաճ հիւրասիրութեամբ: Տաճարի մուտքին ղիմաւորողներն էին Էփումէմի Յարաբորութեանց Վարիշ Տ. Արիս Եպս. Շիրվանեան, Աւագ Բարգմանի պաշտօնով Տ. Աւետիս Արդ. Իփրանեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, նաեւ Յունաց եւ Ֆրանչիսկաններու տեսուչները:

Բշ. 30 Նոյ.– Երուսաղէմի Երովպիական եկեղեցւոյ նոր ժամանած Առաջնորդ Գարրիէլ Արքեպիսկոպոս իր Միաբանութեան անդամներով Պատրիարքարան այցելեց, եւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան անդամներուն կողմէ սիրալիւր ընդունելութեան արժանացաւ Պատրիարքարանի ղախիւնին մէջ:

Գշ. 3 Դեկտ.– Պատրիարք Սրբազան Հայրը, ընդառաջելով Միացեալ Նահանգաց Հայց. եկեղեցւոյ Արքեմտեան Թեմի Առաջնորդ, Գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի նրաւերին մեկնեցաւ Գալիֆօրնիա, եւ վերադարձաւ 22 Դեկտեմբերին: (Մանրամասնութիւնք յաջորդ թիւով):